

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՍՈՒՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՄԱՐՏԻ 8-Ի՝
ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի՛ կանայք, մայրե՛ր, աղջիկնե՛ր.

Երջանկության, սիրո, ընտանեկան բարեկեցության ջերմ մաղթանքներով սրտանց շնորհավորում եմ ձեզ գարնանային այս լուսավոր տոնի՝ մարտի 8-ի կապակցությամբ :
Հայ կնոջ դրվատանքը գալիս է դարերի խորքից. ձեր գրավչությունը, ազգասիրությունը, անկոտրում կամքն ու պատմական կարևոր դերակատարությունը բազմիցս հիշատակվում է հայ մատենագրության էջերում:

Ձեր անսահման առաքինության շնորհիվ է հարատևում հայ ընտանիքի ավանդական ամրությունը, որը մեր պետականության հիմքն է: Անառարկելի է ձեր ներդրումը մեր երկրի այսօրվա ձեռքբերումների, ազգային արժեհամակարգի կերտման, իսկ շրջադարձային պահերին՝ նաև տոկունության և հավասարակշռության պահպանման գործում:

Մեր պետականության կազմավորման ճանապարհին դուք կարողացաք դիմակայել բոլոր մարտահրավերներին, զինվորագրվելով արցախյան պատերազմին՝ կարևոր ներդրում ունեցաք ազգի ճակատագրական հաղթանակներից մեկում:

Թող հարատև լինեն ձեր հայրենաշեն գործունեությունն ու արժանավայել քաղաքացի լինելու ձգտումը: Ձեր կյանքի բոլոր օրերը թող լեցուն լինեն գարնանային գույներով, ջերմությամբ և խինդով:

Թող ի կատար ածվեն ձեր բոլոր նվիրական երազանքները՝ ի բարօրություն հայ ըտանիքի և հայոց պետականության: